

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ  
<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>>  
ԵՎ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներով

**Կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական (<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>) առարկաների և դասվարների՝ <<Լավագույն ուսուցիչ>>, ինչպես նաև <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթները կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Րադայան Գ.- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ստեփանյան Ռ.- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Բիծյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Գաբրիելյան Հ. - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակից

Հակոբյան Ա. - Մ. Մարիկի միջնակարգ դպրոցի տնօրեն

Ղարիբյան Ա. - Սևանի N 3 մսուր-մանկապարտեզի տնօրեն

Գաբրիելյան Հ.- Ճամբարակի N 4 միջնակարգ դպրոցի հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի

Պետրոսյան Ա. - Գեղիովիտի N 2 միջնակարգ դպրոցի քիմիայի ուսուցիչ

Գաբրիելյան Ս. -ԿԱԻ Գեղարքունիքի մասնաճյուղի աշխատակից, Գավառի N 4 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Խանամիրյան Գ. - Գավառի N 3 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի

Գևորգյան Վ. - Մարտունու N 1 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ

Սահակյան Վ. - Ծովակի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ

Ոսկանյան Ժ. - Ակունքի միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի

Մելիքյան Ս. - Սևանի N 1 հիմնական դպրոցի ՆԶՊ ուսուցիչ

Պետրոսյան Ն. - Մարտունու N 3 միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի

Սաֆարյան Ա. - Գավառի N 5 հիմնական դպրոցի դասվար

2. Հանձնաժողովին (նախագահ Ա.Ղուկասյան)՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի մարտի 23-ի N 185-Ա/Ք հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգ>>-ի և 2011 թվականի փետրվարի 15-ի N 106-Ա/Ք հրամանով հաստատված <<Հայոց լեզու և գրականություն>>,

<<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական (<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>) առարկաների և դասվարների՝ <<Լավագույն ուսուցիչ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգ>>-ի համաձայն կազմակերպել և անցկացնել համապատասխան մրցույթների մարզային փուլը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ